ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշսիի 1

№ 5021-Ա « 12 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՄԱՆԹԱՇՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.4/7 ՇԵՆՔ Հ.19 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՇՈՏ ՄԱՐՏԻՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ՆԱՐԵԿ ԱՇՈՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԳՈՒՐԳԵՆ ԱՇՈՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵՎ ԻՐԻՆԱ ՍԵՐԳԵՅԻ ՊԱՊՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12–ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 14.08.2025թ. տրված մասնագիտական եզրակացությունը, «ՇԵՄՔ» ՍՊԸ-ի կողմից 29.01.2025թ. տրված տեխնիկական դրական եզրակացությունը, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի կողմից տրված 01.02.2023թ. հ.ԱԱ/1091-2023 գրությունը, բաժնային սեփականատերերի վերաբերյալ ՀՀ կադաստրի կոմիտեի 17.02.2023թ. հ.ԱՏ-17022023-01-0532, 23.10.2025թ. հ.ԱՏ-23102025-01-0406 տեղեկանքները, բաժնային սեփականատերերի կողմից տրված գրավոր համաձայնությունները, «Գ.Առաքելյան» ԱՁ-ի կողմից 13.10.2022թ. տրված ինքնակամ շինությունների արտաքին չափերի հատակագիծը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած անձանց դիմումները (06.03.2023թ. հ.Դ-27046-23, 12.07.2023թ. հ.Դ-83745-23, 05.09.2023թ. հ.Դ-109345-23, 29.11.2023թ. հ.Դ-148880-23, 15.01.2024թ. հ.Դ-5424-24, 09.02.2024 հ.Դ-18427-24, 29.05.2024թ. հ.Դ-68886-24, 14.11.2024թ. հ.Դ-145020-24, 25.12.2024թ. հ.Դ-164034-24, 03.02.2025թ. հ.Դ-11751-25, 02.05.2025թ. հ.Դ-46924-25, 02.07.2025թ. հ.Դ-71032-25, 13.08.2025թ. հ.Դ-88298-25, 12.11.2025թ. հ.Դ-125275-25).

1. Երևան, Շենգավիթ, Մանթաշյան փողոց հ.4/7 շենք հ.19 բնակարան հասցեում՝ (սեփականության իրավունքի /օգտագործման/ պետական գրանցման 29.10.2010թ. հ.2734051 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2022GWE3VC) քաղաքացիներ Աշոտ Մարտինի Ավետիսյանի, Նարեկ Աշոտի Ավետիսյանի, Գուրգեն Աշոտի

Ավետիսյանի և Իրինա Սերգեյի Պապոյանի կողմից ինքնակամ իրականացրած 26,6քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի) ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 277704 (երկու հարյուր յոթանասունյոթ հազար յոթ հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ